



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
 ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱՐԱՐ
 Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«24» 05 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000039

Ձեռնարկողը՝

«Ջոինթ Բոնսթրաքչնս» ՍՊԸ
 Բ. Երևան, Աճառյան 42

Գործունեությունը՝

Նոր-Նորք վարչական շրջանի Նանսենի փողոց 24 հասցեում
 նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի
 կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
 նախնական գնահատման հայտ
 ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
 փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
 տնօրենի պաշտոնակատար՝



(Handwritten signature)

Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000039

<24> 05 2019թ.

**Նոր-Նորք վարչական շրջանի Նանսենի փողոց 24 հասցեում
նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Ջոինթ Քոնսթրաքշնս» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Նոր-Նորք վարչական շրջան

«Ջոինթ Քոնսթրաքշնս» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Նոր-Նորքի վարչական շրջանի Նանսենի փողոց 24 հասցեում հատկացված հողատարածքում կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի շենք: Նշված հասցեում նախկինում կառուցված է եղել «Նորք» կինոթատրոնի շենքը, որի քանդման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետարանի կողմից 01.10.2008թ-ին տրված N02/18-2-23055-195 քանդման թույլտվության հիման վրա: Շենքը՝ 1899.1 քմ զբաղեցրած մակերեսով, միահարկ, վերնահարկով և նկուղային հարկով շինություն էր: Տարածքում մնացել է նախկին շենքի (կինոթատրոնի) կիսաքանդ, քայքայված կոնստրուկցիաներով կառույցը:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի նախագծման համար Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է N 01/18-07/2-56095-663 առ 10.09.2018թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.22972հա հողամասում, բնակավայրերի, հասարակական կառուցապատման՝ նպատակային և գործառնական նշանակության գոտում: Հողամասի ընդհանուր մակերեսը 2297.2մ2 է, մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1290.00 -1286.00 մետրի սահմաններում:

Կառույցը նախագծված է ժամանակակից լուծումներով՝ ներդաշնակ շրջակա կառույցներին և շրջակա միջավայրն ընկալելու համար վիզուալ տեսողաշարի խոչնդոտ չի հանդիսանում: Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքը հատակագծում ունի ուղղանկյան տեսք, բաղկացած է տասնինը վերգետնյա և երկու նկուղային հարկերից:

Նկուղային հարկերում (-6.00 և -3.30 նիշերում) նախատեսված են 120 մեթրնայի համար կայանատեղի, որի մուտքը կազմակերպված է հողամասի հյուսիս-արևելյան հատվածից: Առաջին հարկում (0.00 նիշ) բնակիչների համար նախատեսված են հասարակական



տարածքներ և առանձին մուտքային հանգույց: Երկրորդից տասնիններորդ հարկերում (+3.30 - +39.30 նիշերում) նախատեսված են՝ 252 հատ մեկ, երկու, երեք, չորս սենյականոց բնակարաններ: Հարկերը միմիանց հետ հաղորդակցվում են երկու սանդղավանդակներով և չորս վերելակներով:

Ճակատները նախատեսված են սրբատաշ, բազալտե, բաց երանգի տուֆե և տրավերտինե քարասալերի ու բարձրորակ սվաղի հարդարմամբ՝ պատշգամբների ու ապակե հարթությունների համադրությամբ: Տանիքը նախագծված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո հողամասի չկառուցապատված հատվածները և հարակից տարածքները նախատեսվում է բարեկարգել: Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են.

- ընդհանուր շինարարական մակերես՝ 30000.0 մ²,
- ընդհանուր բնակելի մակերես՝ 18300.0 մ²,
- վերգետնյա կառուցապատման տոկոս՝ 49.97%,
- ստորգետնյա կառուցապատման տոկոս՝ 88.97%,
- կանաչապատման մակերես՝ տարածքի 20%-ը կամ 460մ²:

Տարածքում ամբողջությամբ պահպանվելու է գոյություն ունեցող կանաչապատ գոտիները, կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգվելու և կանաչապատվելու է: Կանաչապատումն իրականացվելու է երևանյան լանդշաֆտին համապատասխան ծառատեսակներով և թփերով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են ըստ ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի՝ 36 ամիս տևողությամբ: Որպես շինհրապարակ ծառայելու է ամբողջ հողատարածքը: Շինհրապարակում չի նախատեսվում շինանյութերի, սորուն նյութերի, կամ այլ նյութերի պահեստներ: Ապրանքային բետոնը նախատեսված է շինհրապարակ բերել բետոնա-շաղախային հանգույցից՝ պատրաստի վիճակում: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լցավորումը և յուղումը նախատեսված է իրականացնել շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են տարածքում գործող քաղաքային ցանցերին միանալուց հետո: Ջուրն օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև շինաշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Ընդհանուր ջրօգտագործումը կկազմի 858.06 մ³/շին. ժամ, որից ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 337.5 մ³/շին. ժամ. կամ 0.31 մ³/օր:

Շենքի ջրամատակարարման համակարգը փակուղային է՝ մղման պոմպերի միջոցով: Շենքի ներքին սառը ջրամատակարարման ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային՝ 20-63 մմ և պոլիէթիլենային՝ 90 մմ տրամաչափերի խողովակներով: Ջրահեռացման՝ կոյուղու ներքին ցանցը նախատեսված է՝ 50-200 մմ տրամաչափի կոյուղու պոլիէթիլեն խողովակներով՝ ռետինե սեղմիչ օղակներով: Կոյուղու թողարկները պոլիէթիլեն խողովակներով միացվում են առկա կոյուղու բակային ցանցին: Սառը ջրամատակարարումը, կենցաղային կոյուղին, ներքին հակահրդեհային համակարգերը պետք է միացվեն առկա համապատասխան ցանցերին:

Բազմաբնակարան բնակելի շենքի հողային աշխատանքների ընթացքում երկաթ/բետոնյա հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 1100 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որը նախատեսված է տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված աղբավայր: Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:



Նոր կառուցվող բնակելի շենքի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ առկա շինության քանդման և նոր շենքի կառուցման ընթացքում, հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- պարբերաբար իրականացնել ջրցան, ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը՝ իրականացնելով կարգավորում,
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը շրջակա տարածքներ կանխարգելելու նպատակով,

Շրջակա տարածքների պահպանության և հնարավոր վառելիքի կամ քսայուղերի արտահոսքերը կանխարգելելու նպատակով շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա: Այն տարածքներում, որտեղ կայանելու են շինարարական տեխնիկական և տեխնիկական միջոցները, նախատեսված է պատել ավազով, կամ մանրախճով, անհրաժեշտության դեպքում փոխված ավազը կամ մանրախիճը փոխարինել նորով:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման: Պարզեցված ջուրը կրկին օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հիմնական թափոնատեսակները կլինեն կենցաղային աղբը և 320մ3 ծավալով շինարարական աղբը /որից 150 մ3 ծավալը նախկին կինոթատրոնի կիսաքանդ շինությունից են/: Աշխատանքների ավարտից հետո տարածքները կմաքրվեն թափոններից սահմանված կարգով կտեղադրվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայրեր:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված է շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում ցերեկային ժամերին, աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգման և կարգաբերման իրականացում:

Նախատեսվել են նաև, աշխատողների առողջությանը, աշխատանքային անվտանգությանը և հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելուն կամ մեղմելուն ուղղված միջոցառումներ՝ շինարարության փուլի համար: Այդ միջոցառումներից կարևորվում են՝ մոտակա, հարակից տարածքների բնակչության իրազեկումը շինարարական աշխատանքներին, շինարարության ժամանակացույցի պահպանումը, փոշու առաջացման կանխումը, աղմուկի մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումները և այլն: Որպես սոցիալական ազդեցությունների մեղմման միջոցառումներ, շինհրապարակի հարևանությամբ նախատեսված է ցուցանակների տեղադրում, ժամանակավոր անցուղիների նախատեսում և երթևեկության կանոնակարգում:



Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդի և հողի աղտոտվածություն, աղմուկ, թրթռում/: Հայտում ներկայացվել է մշտադիտարկումների իրականացման ժամանակացույցերը և ծախսերը, որը տարեկան կկազմի՝ 350.0հազ.դրամ:

Նախագծով նախատեսված կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի նոր բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Նշված աշխատանքներն իրականացվելու են երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ տարածքի համար մշակված դենդրոնախագծին համաձայն: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է՝ թույա ոսկեգույն, թույա սյունածև, գնդածև ակացիա, հացենի, կաղնի, թղկի, դազախական գիհի: Կանաչապատման համար օգտագործվելու է ծաղկասածիլ և սիզախոտ: Սկզբնական շրջանում ոռոգումն իրականացվելու է բերովի ջրով: Նախագծված տարածքի կանաչապատման ընդհանուր ծախսերը գնահատվել են՝ 4. 315000 դրամ ՀՀ դրամ:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ջոինթ Բոնսթրաքշնս» ՍՊԸ կողմից ներկայացված Նոր-Նորք վարչական շրջանի Նանսենի փողոց 24 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ.մասնագետ՝



Հ. Մկրտչյան